Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
օգոստոսի 18-ի N 1228 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ, ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՀԵՏ ՇՓՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՄՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից (այսուհետ՝ կոմիտե) սննդամթերքի անվտանգության ոլորտի լիազոր մարմնին (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը տրամադրվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների վերաբերյալ տեղեկատվություն (այսուհետ՝ տեղեկատվություն)՝ համաձայն ձևի:

2. Կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը տրամադրվում է «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ համապատասխանության պատադիր հավաստման ենթակա՝ Անկախ պետությունների համագործակցության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՊՀ ԱՏԳ ԱԱ) ծածկագրերի շարքը դասվող սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն ցանկի:

3. Տեղեկատվությունը կոմիտեի կողմից լիազոր մարմնին է տրամադրվում յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա 20-ը, էլեկտրոնային եղանակով կամ կրիչով՝ համաձայն ձևի:

4. Լիազոր մարմնի ղեկավարը յուրաքանչյուր կիսամյակի համար մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա 20-ը էլեկտրոնային եղանակով կամ կրիչով կոմիտեի նախագահին տրամադրում է տեղեկատվություն սույն կարգի 2-րդ կետի համաձայն տրամադրված տեղեկատվության հիման վրա իրականացված պետական վերահսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1442-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

20 _____ ԹՎԱԿԱՆԻ _____ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ, ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՀԵՏ ՇՓՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՄՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ (ԱՊՐԱՆՔԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN ը/կ	Ապրանք տեղափոխող անձի անունը, ազգանունը, գտնվելու (բնակության) վայրը, ներմուծող իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, իրավաբանական և էլեկտրոնային հասցեները, հեռախոսահամարները	Ներմուծված ապրանքի անվանումը	Ծագման երկիրը	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկով (ԱՏԳ ԱԱ) ծածկագիրը	Ապրանքի քանակը	Մաքսային հայտարարագրի համարը և ամսաթիվը	Հարկ վճարողի հաշվի համարը (ՀՎՀՀ)
1	2	3	4	5	6	7	8

Ց Ա Ն Կ

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ՝ ԸՍՏ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԻ (ԱՏԳ ԱԱ) ԾԱԾԿԱԳՐԻ

ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Արտադրանքի անվանումը
0201	Խոշոր եղջերավոր անասունի միս՝ թարմ կամ պաղեցված
0202	Խոշոր եղջերավոր անասունի միս՝ սառեցված
0203	Խոզի միս՝ թարմ, պաղեցված կամ սառեցված
0204	Ոչխարի կամ այծի միս՝ թարմ, պաղեցված կամ սառեցված
0205 00	Ձիու, ավանակի, ջորու միս՝ թարմ, պաղեցված կամ սառեցված
0206	Խոշոր եղջերավոր անասունի, խոզի, ոչխարի, այծի, ձիու, ավանակի, ջորու սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցված կամ սառեցված
0207	Ընտանի թռչնի միս և սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցված կամ սառեցված
0208	Այլ կենդանիների միս և սննդային մսային ենթամթերք՝ թարմ, պաղեցված կամ սառեցված
0209 00	Մսից առանձնացված խոզի ճարպ և թռչնի ճարպ՝ չհալեցված, թարմ, պաղեցված, սառեցված, աղի, աղաջրում, չորացված կամ ապխտած
0210	Այլ կենդանիների միս և սննդային ենթամթերք՝ աղի, աղաջրում, չորացված կամ ապխտած, սննդային ալյուր՝ պատրաստված մսից և սննդային ենթամթերքից
1601 00	Մսից, մսային ենթամթերքից կամ արյունից պատրաստված երշիկեղեն և համանման մթերք, դրանց հիմքով պատրաստված պատրաստի սննդամթերք
1602	Մսից, մսային ենթամթերքից կամ արյունից պատրաստված այլ պատրաստի կամ պահածոյացված սննդամթերք
1603 00	Մզվածքներ և հյութեր՝ մսից
407 00	Թռչնի ձու
110100	Ալյուր
1507 10 900, 1509 90 000, 1512 19 910, 1515 29 900	Սոյայի, ձիթապտղի, արևածաղկի, եգիպտացորենի յուղ (ձեթ)
1516, 1517	Կենդանական և բուսական ճարպեր, հիդրոգենիզացված յուղեր, մարգարին
1604-1605	Պատրաստի սննդամթերք՝ ձկից և խեցգետնանմաններից, կակղամորթներից և ջրային այլ անողնաշարավորներից
1701, 1702 90, 1703, 1704	Շաքար, շաքարից պատրաստված հրուշակեղեն՝ կակաո չպարունակող

1805 00 000, 1806	Կակաոյի փոշի, շոկոլադ և կակաո պարունակող այլ սննդամթերք
1901 10 000	Մանկական սնունդ
1902-1905 (բացի 1905 90 300-ից)	Մակարոնային արտադրանք, ալրային հրուշակեղեն
2001-2008 (բացի 2002 90-ից, 2007 99-ից)	Մթերք՝ ստացված բանջարեղենի, պտուղների (մրգերի), ընկույզների կամ բույսերի այլ մասերի վերամշակումից
2101 - 2104	Տարբեր սննդամթերք, խմորիչ
2201 - 2209 00 (բացի 2202 90 100-ից, 2203 00-ից, 2208 20 120-ից, 2208 20 400-ից, 2208 20 620-ից, 2208 20 890-ից)	Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ, քացախ
2501 00 91	Կերակրի աղ
2208 20 120	Խաղողի գինենյութերի թորումից ստացված կոնյակ՝ 2 լ կամ պակաս տարողությամբ տարաներում
2208 20 620	Խաղողի գինենյութերի թորումից ստացված կոնյակ՝ 2 լ-ից ավելի տարողությամբ տարաներում
2208 20 400	Խաղողի գինենյութերի թորումից ստացված սպիրտային թուրմ (չվերամշակված թորվածք)՝ 2 լ-ից ավելի տարողությամբ տարաներում
2208 20 890	Խաղողի գինենյութերի թորումից ստացված սպիրտային թուրմ՝ 2 լ-ից ավելի տարողությամբ տարաներում
0701	Թարմ կարտոֆիլ
070200000	Թարմ տոմատ
0703	Թարմ գլուխ սոխ, մանր սոխ, սոխ-պրաս և սխտոր
0704	Թարմ գլուխ կաղամբ, ծաղկակաղամբ, շաղգամա-կաղամբ, սպիտակագլուխ և կարմրագլուխ կաղամբներ
0705	Թարմ հազար և եղերդ
0706	Թարմ գազար, շաղգամ, սեղանի ճակնդեղ (կարմիր ճակնդեղ), քոշմորուք, նեխուր, ամսական բողկ և համանման ուտելի այլ արմատապտուղներ
070700050	Թարմ վարունգ
0708	Թարմ լոբազգի բանջարեղեն՝ կեղևահան կամ կեղևով
070990800	Թարմ արտիճուկ
070920000	Թարմ ծնեբեկ
070930000	Թարմ սմբուկ
070960	Թարմ պղպեղ
070990700	Թարմ դդմիկ
0801	Թարմ կոկոսյան, բրազիլական և կեչու ընկույզներ՝ կճեպահանված կամ չհանված, կեղևով կամ առանց կեղևի
0802	Թարմ նուշ
080300	Թարմ ադամաթուզ
0804	Թարմ արմավ, թուզ, արքայախնձոր, ավոկադո, հնդկախնձոր (գուայավա), մանգո և մանգոստան
0805	Թարմ ցիտրուսային պտուղներ
0806	Թարմ խաղող
0807	Թարմ սեխ (ներառյալ ձմերուկը) և պապայա
0808	Թարմ խնձոր, տանձ և սերկևիլ
0809	Թարմ ծիրան, բալ և կեռաս, դեղձ (ներառյալ նեկտարինը), սալոր և մամուխ
081010000	Թարմ մորի և ելակ

081020	Թարմ արքայամորի, մոշ, թութ և հովտային հատապտուղներ
081090500	Թարմ հաղարջ՝ սպիտակ և կոկոռշ
081090980	Թարմ հաղարջ՝ սև և կարմիր
081050000	Կիվի
1001	Ցորեն և մեսլին
1002 00 000	Աշորա (տարեկան)
1003 00	Գարի
1004 00 000	Վարսակ
1005	Եգիպտացորեն
1006	Բրինձ
1007 00	Սորգոյի հատիկ
1008	Հնդկացորեն, կորեկ և այլ հացահատիկ
1008 30 000	Բացառությամբ սերինոսահատիկի
2203 00	Գարեջուր
0401	Կաթ և սերուցք՝ չխտացրած կամ շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր չավելացրած
0402	Կաթ և սերուցք՝ խտացրած կամ շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած
0403	Թան, մերած կաթ և սերուցք, մածուն, յոգուրտ, կեֆիր և խմորման ենթարկված կամ թթվեցրած այլ կաթ ու սերուցք՝ խտացրած կամ չխտացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, համաբուրավետիչ հավելումներով կամ առանց դրանց, մրգեր, ընկույզներ կամ կակաո ավելացրած կամ չավելացրած
0404	Կաթնային շիճուկ՝ խտացրած կամ չխտացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, մթերք՝ կաթի բնական բաղադրամասերից, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած
0405	Կարագ և կաթից պատրաստված այլ յուղեր, կաթնային մածուկներ
0406	Պանիրներ և կաթնաշոռ
1901 10 000	0401-ից մինչև 0404 ապրանքային ծածկագրերով հումքից պատրաստված, կակաո չպարունակող կամ պարունակող՝ 5 տոկոսից պակաս զանգվածային մասով (վերահաշված՝ ըստ յուղազերծ հումքի), մանրածախ առևտրի համար չափածրարված մանկական սնունդ
2105 00	Պաղպաղակ՝ կակաո պարունակող կամ չպարունակող՝ բացառությամբ սննդային սառույցի այլ տեսակների
2106 90 100	Պանիրներ՝ հալած
2106 90 980	Բուսասերուցքային և սերուցքաբուսական յուղերի խառնուրդներ, այդ թվում՝ սփրեդը (յուղածոն) և հալած խառնուրդները՝ կաթնայուղի 15 տոկոսից ավելի զանգվածային մասով
2002 90	Տոմատի խյուս, տոմատի մածուկ, 7 տոկոս և ավելի լուծելի չոր նյութերի զանգվածային մասով տոմատի հյութ
2007 99	Ծածկագրից՝ մրգային խյուսեր

2009	Չխմորված և առանց սպիրտային հավելումների, շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի ավելացմամբ կամ առանց ավելացման մրգային և բանջարեղենային հյութեր
2202 90 100	Մրգային և բանջարեղենային նեկտարներ և հյութ պարունակող ըմպելիքներ, որոնք չեն պարունակում 0401-ից մինչև 0404 ապրանքային ծածկագրերով մթերքներ կամ դրանցից ստացված ճարպեր
22 0110	Հանքային ջրեր
3923 10 000	Պլաստմասսաներից տուփեր, արկղեր, զամբյուղներ և համանման իրեր՝ փաթեթավորման կամ փոխադրման համար
3923 21 000	Էթիլենի պոլիմերներից պարկեր և պայուսակներ (ներառյալ կոնաձևերը)՝ փաթեթավորման կամ փոխադրման համար
3923 29	Այլ պլաստմասսաներից պարկեր և պայուսակներ (ներառյալ կոնաձևերը)՝ փաթեթավորման կամ փոխադրման համար
3923 30	Պլաստմասսաներից շշեր, շշիկներ, սրվակներ և համանման արտադրանքներ՝ փաթեթավորման կամ փոխադրման համար
3923 50	Պլաստմասսաներից խցաններ, կափարիչներ, թասակներ և խցանափակման այլ արտադրանքներ
3924 10 000	Պլաստմասսաներից խոհանոցային և ճաշի սպասքներ